ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<10>> սեպտեմբերի 2024թ. N ՄՈ/432 - Ա

ք. Արմավիր

ՍԵՐՅՈԺԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 12-ի N 1230-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ և 12-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի օգոստոսի 26-ի ՆԳՍ/17/3/27432-2024 հանձնարարականը, Չինաստանի ժողովրդական Հանրապետության Ֆուճոու քաղաքում կայանալիք «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացին մասնակցելու նպատակով.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սերյոժա Գրիգորյանին 2024 թվականի սեպտեմբերի 11-ից 28-ը ներառյալ գործուղել Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:
2. Սերյոժա Գրիգորյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հաշվետվություն Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ:
3. Սերյոժա Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի սեպտեմբերի 30-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ **ԽԱՉԱՏՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ**